



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

617.7

0-45


№ 14



ԲԺ Բ. ՕՂԱՆԵԱՆ

# ԿՈՒՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Արտատպած «Մշակ»-ըն



Բ Ա Վ Ո Ւ  
ՏՊԱԲԱՆ «ԱՐՐԻ»  
1904

02 SEP 2013

7890

610  
215-02

617.7  
0-33  
my.

04 AUG 2010

ԲԺՒՆԿ Գ. ՕՂՍԵՆՆԵ:

# ԿՈՒՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1003  
10445



Արտատպած „Մշակ“-ից

Բ Ա Գ Ո Ւ

Տ Պ Ա Ր Ա Ն „Ա Ր Օ Ր“

1904







նում էին իրանց գերիների աչքերը, որ ինչ էսրանք աշխատելիս իզուր ժամանակ չը կորցնեն այստեղ-այնտեղ նայելով: Գիտնիստոս, Սիրակուզի տիրանը, իր ձեռքն ընկած գերիներին կուրացնում էր հետեւեալ կերպով. — նա պահում էր գերիներին բոլորովին մութ բանտում եւ յետոյ յանկարծակի դուրս բերել տալիս արեգակի ճառագայթների տակիւ նրանք բոլորը կուրանում էին: Բիւզանդիայի Բարսեղ կայսրը 1001 թւականին հրամայեց կուրացնել 15,000 գերի ընկած բուլղար զինւորներին: Ի՞նչու հետո գնալ մեր հարեւան Պարսկաստանում կուրացնելը սովորական պատիժ է... Նազիր Շահը «կուրացրեց իր որդուն... Մէշէզում հանել տուեց բոլոր բնակիչն ~~եւ~~ կամ երկու աչքերը» \*):

Եթէ ի նկատի ունենանք, որ ամեն մի կոյր անկարող է ինքնուրոյն կառավարվել, որ արդի վիճակում նա անընդունակ է որ և է արդիւնաւոր գործ կատարելու, ուստի կոյր մարդը դառնում է հասարակութեան անօգուտ անդամ, — այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ որքան կարեւոր է կուրութեան պատճառների ուսումնասիրութիւնը: Ասելով, թէ կոյր մարդը դառնում է հասարակութեան

\*) Հայոց Գրականութիւն Ա. Թ. Մուրճ, 1901 թ. №7

անօգուտ անդամ, ես ի նկատի չունեմ բացառիկ դէպքերը. խօսքս ոչ կոյր Միլտոնի մասին է, որ իր աղջիկներին թելադրեց «Կորուսեալ Դրախտ» պօէման, ոչ Գալիլէի մասին, որ նոյն իսկ կուրացած ժամանակ շարունակում էր գիտական հետազոտութիւններով պարապել, ոչ ականաւոր մաթեմատիկոս-պրօֆէսոր Սանդէրսօնի մասին, որն ի ծնէ կոյր էր, ոչ կոյր վիպասանուհի Սլիս Կինգի մասին, ոչ էլ մեր կոյր աշուղների մասին, որոնք իրանց պարէնը հայթայթում են պատւաբեր արհեստով: Մի կողմ թողած այդ հազազիւտ բացառութիւնները, կոյրերի մեծամասնութիւնը ծանր բեռ է իրանց շրջապատողների համար:

Ռուսաստանում կոյրերի թիւը շատ մեծ է: Առաջին անգամ կոյրերի վիճակագրութիւնը եղել է 1886 թւականին ներքին գործերի մինիստրութեան կարգագրութեամբ: Իրանից երեւաց, որ Ռուսաստանում կան 189,909 կոյրեր, որոնցից 94,097 հոգի տղամարդիկ են, իսկ 95,830 կանայք: Կոյրերից ամենաշատը գտնվում է եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներում, 5353՝ Լեհաստանում եւ 10,774 հոգի Կովկասում: Միջին թւով իւրաքանչիւր 500 բնակչին ընկնում է մի կոյր: Կոյ-



րերի ընդհանուր թւից 10 տոկոսը կազմում են երեխաները:

Արդ՝ ապացուցված է, որ հարիւր կոյրերից 75 հոգի(ըստ Կոնի եւ Զայլմանի) զրկվել են տեսողութիւնից շնորհիւ այն հանգամանքի, որ իր ժամանակին բժշկական օգնութիւն չեն ունեցել:

Կուրուլթեան պատճառները բազմաթիւ են. սակայն մենք կը խօսենք միմիայն այնպիսիների մասին, որոնցից շատերն են կուրանում եւ որոնց նախազգուշական միջոցներով կարելի է հեռացնել:

Յաճախ մարդ կուրանում է շնորհիւ տգիտութեան. վերցնենք մի հասարակ դէպք: Ահա տիֆոյ(եաթալըղ) հիւանդ մի մարդ. նա առանց ուշքի ընկած է, աչքերը կիսաբաց են եւ անթարթ, ուստի նրանք արնակալում են եւ չորանալուց եղջերաթաղանթի վրա գոյանում են «խոցեր», որոնք լայնանալով և խորանալով ծակում են եղջերաթաղանթը եւ, ինչպէս ասում են, «աչքը դուրս է գալիս»: Սակայն այդ դժբախտութիւնը չէր պատահի, եթէ հիւանդին խնամողը շարունակ լուանար հիւանդի աչքերը, կուպերը փակէր եւ նրանց վրա դներ մի կտոր մաքուր ջուր, վրայից բամբակ եւ թաշկինակով կպէր, — այս դէպքում

աչքերը չէին չորանայ եւ կը մնային անվնաս: Այդ մի դէպք է, ուր ամենահասարակ օգնութիւնը կարող է մարդի տեսողութիւնն ազատել, եթէ իմացվի վտանգի էութիւնը: Բարեբախտաբար այս պատճառից քիչերն են կուրանում:

Կովկասում, ինչպէս եւ Ռուսաստանում, գիւղացիները կուրանում են գլխաւորապէս ծաղկից եւ արախօմայից, մինչդեռ քաղաքներում կուրուլթեան պատճառների թւում առաջին տեղը բռնում են տեսանեարդի ծիրութիւնը (атрофия зрительного нерва), աչքերի թարախային բորբոքումն եւ գլաուկոմա (սև ջուր):

Մինչև ժենների գիւտը (1796 թ.) ծաղիկը կուրուլթեան ամենագլխաւոր պատճառն էր ամենուրեք: Երկու աչքով հարիւր կոյրերից 35-ը տեսողութիւնից զրկվում էին ծաղկից: Այդ հիւանդութիւնը չէ խնայում աչքի ոչ մի մաս, սակայն գլխաւորապէս նա փչացնում է եղջերաթաղանթը: Սովորաբար երկու աչքը միասին են հիւանդանում, որ յաճախ բոլորովին կուրացնում է հիւանդին:

Ամենախրական նախազգուշական միջոցը ծաղկի դէմ՝ պատուաստն է: Պարտադիր պատուաստի բարերար ազդեցութիւնը պարզ ե-



րեւում է այն երկիրներում, ուր գոյութիւն ունի մի տեղ պարտադիր, իսկ մի այլ տեղ ոչ-պարտադիր պատուաստ: Օրինակ, մահացութիւնը ծաղկից Ռուսաստանում 100 անգամ, իսկ Աւստրիայում 85 անգամ աւելի է եղել, քան թէ Գերմանիայում, ուր ծաղկի պատուաստը պարտադիր է: Ռուս բժիշկ Ստեֆանի՝ Գերմանիայում 100 կոյրերից 35-ը տեսողութիւնից զրկվել էին ծաղկից, մինչդեռ երկրի մէջ պատուաստ մտցնելուց հետոյ 100 կոյրերից միմիայն երկուսն են ծաղկից կուրանում: Մեզ մօտ ծաղկի պատուաստը տարածված չէ ամենուրեք եւ պարտադիր չէ. կան այնպիսի գիւղեր, ուր բոլոր երեխաները հիւանդացել են ծաղկից, ուստի հասկնալի է թէ ինչու մեր երկրում ծաղկից կուրացածներն այնքան բազմաթիւ են: Հայերի մէջ ծաղիկ ընկած երեխային սովորաբար չեն բժշկում, նոյն իսկ արգելում են հասարակ լուծողական անգամ տալ հիւանդին: Այս դէպքում աւելի խստապահանջ են լինում պառականայք, որոնք խստիւ արգելում են բժշկական միջամտութիւնը, որ ծաղիկ «մասն ածողին» չը բարկացնեն: Անձամբ տեսած եմ շատ երեխաներ, որոնք կուրացել են շնորհիւ իրանց շրջապատող կանանց անողոք կամակո-

րութեան: Անուշադիր են թողնում և հիւանդի աչքերը, որոնք երկար ժամանակ փակված են մնում, որովհետեւ խոցերով ծածկված կուպերն ուռչում են: Հիւանդապահներն երբէք չեն բաց անում երեխայի աչքերը, որ տեսնեն, թէ ինչ կայ այնտեղ: Սակայն յաճախ եղջերաթաղանթի վրա երեւան են դալիս թաւախալից խոցեր, որոնք գոյանում են այն ժամանակ, երբ մարմնի խոցերը սկսում են չորանալ: Այդ տեսակ խոցերը փչացնում են եղջերաթաղանթը եւ պատճառ դառնում կուրութեան:

Արդ՝ ծաղկի ժամանակ անհրաժեշտ է լաւ ուշադրութիւն դարձնել հիւանդի աչքերին, օրական մի քանի անգամ լուանալ որ եւ է ախտահանիչ հեղուկով, կուպերը վազելինով կամ մաքուր իւղով օժել եւ վրան կօմպրէսներ դնել, իսկ եթէ շրջապատողները կը նկատեն, որ հիւանդի աչքերի եղջերաթաղանթը պղտորվում է, իսկոյն եւ եթ պէտք է դիմել բժշկի օգնութեան:

Մեզ մօտ միշտ վտանգաւոր սովորութիւն կայ, որի դէմ պիտի խստիւ մաքառել: Այդ այն է, որ երբ ծաղիկ ընկած երեխայի աչքերը սկսում են ցաւել, վերցնում են նոյն հիւանդի մարմոցե խնի ըի չորացաց եւ փոշի



դարձրած թարախը ու ածուժ աչքերը: Հասկանալի է, թէ որքան վտանգաւոր է այդ տրգէտ բժշկութիւնը:

Կոյրերի մի պատկառելի տոկոս առաջացնում է «նորածին երեխաների աչքերի թարախային բորբոքումը»: Համարեա բոլոր կոյր երեխաների կէսն այդ զարհուրելի հիւանդութիւնից են զրկվել իրանց տեսողութիւնից:

Սովորաբար երեխան հիւանդանում է ծընընդեան երրորդ կամ չորրորդ օրը: Նախ մայրը նկատում է, որ նորածին երեխան աչքերը փակ է պահում: Շուտով աչքերը ճպոտում են եւ թերթերունքներն իրար կաշուժ: Ուռած եւ կարմրած կոպերի արանքից հոսում է պղտոր գեղնաւուն հեղուկ: Կոպերը հետզհետէ աւելի են ուռչում, այնպէս որ երեխան այլ եւս անկարող է լինում աչքերը բաց անել, իսկ կոպերի տակից սկսում է ծորալ արդէն իսկական թարախ, որ օր օրի վրա շատանում է: Երեխան սկսում է անհանգիստ դառնալ, տաքութիւն է տալիս, միշտ լաց է լինում եւ քիչ է քնում: Եթէ ուղեանք իմանալ, թէ աչքի քննչ մասն է ցաւազար, հարկաւոր է զգուշութեամբ ցած քաշել ներքին կոպը, այն ժամանակ կը տեսնենք, որ կոպը ներսից ուռած է եւ կարմրած, ա-

սեւ, թաւիչ լինի: Երեխային անխնամ թողած դէպքում հիւանդութիւնը կոպերից անցնում է եղջերաթաղանթին, որի վրա երեւան կը գան խոցեր, որոնցից աչքը կարող է «ծլլալ եւ երեխային կուրացնել»: Աւելի բարեպատեհ դէպքում եղջերաթաղանթի վրա գոյանում է սպիտակ բիծ (աչքը հատ է ընկնում):

Ի՞նչն է պատճառը այդ հիւանդութեան: Հասարակ ժողովուրդը կարծում է թէ այդ աչքացաւն առաջանում է ցուրտ քամու ազդեցութիւնից, ոմանք էլ հաւատացած են, իբր թէ երեխան ծնվելիս նայած է լինում արեւին: Ի հարկէ, սրանք սխալ հասկացողութիւններ են: Սա մի վարակիչ հիւանդութիւն է եւ համարեա միշտ երեխային վարակում է հէնց ինքը մայրը ծննդեան (երկունքի) միջոցին: Եթէ երկունքի մէջ գտնվող մի կնոջ սեռական գործարաններից հոսում է թարախ, այս դէպքում նորածին երեխան կը ստանա աչքերի թարախային բորբոքումն: Սօր այդ թարախը ծննդեան ժամանակ ընկնում է երեխայի աչքերը եւ վարակում: Առհասարակ վարակումն վերոյիշեալ ձեւով է կատարվում, սակայն երբեմն կարող է այլ կերպ պատահել: Երեխան մի օր եւ է հրաշքով կարող է չը վարակվել երկունքի ժամանակ, թէեւ մօր սե-



ուական անդամները հիւանդ լինեն, այս դէպքում տղէտ տատմայրն է վարակում, երեխային լողացնելով, նրա մարմինը, գլուխը եւ երեսը լուանալով մի եւ նոյն ջրի մէջ, կամ թէ մայրն է վարակում իր երեխային, շոշափելով կեղտոտ ձեռքերով նրա երեսը եւ աչքերը. միւս դէպքում երեխան վարակվում է, երբ նրան պառկեցնում են մօր կեղտոտած անկողնի շորերի վրա:

Պէտք է լաւ լիշել, որ նորածին երեխայի աչքերից ծորած թարախը նոյնպէս վարակիչ է, ինչպէս եւ սեռական գործարաններինը, եւ կարող է վարակել ամեն մարդու աչքեր, եթէ նոյն իսկ մի կաթիլ ընկնի այդ աչքերը:

Միթէ կարելի է ազատ պահել երեխայի աչքերն այդ վարակումից:— Կարելի է եւ միշտ կարելի է: Եւ եթէ երեխաները վարակվում են, հիւանդանում են եւ կուրանում, այս դժբախտութեան մեղքն ամբողջապէս ընկնում է ծնողների վրա, շնորհիւ սրանց անուշադրութեան, անփութութեան եւ գլխաւորապէս տգիտութեան: Սակայն ինչ կերպով կարելի է ազատ պահել երեխայի աչքերն վարակումից: Անհրաժեշտ է ծննդաբերութիւնից ա-

ռաջ բժշկել մօր սեռական գործարանների հիւանդութիւնը. իսկ եթէ մի որ և է պատճառով հիւանդութիւնն անխնամ է թողնված, այնժամանակ պէտք է երկունքից անմիջապէս ստաջ ջրով մաքուր լուանալ ծննդական սեռական գործարանները եւ յետոյ ակտազանել կարբօլեան թթուառով (30/0): Այս դէպքում նորածին երեխան կարող է ազատ մնալ վարակումից: Սակայն միաժամանակ պէտք է երեխայի վրա ուշադրութիւն դարձնել: Հենց որ երեխան աշխարհ եկաւ, անհրաժեշտ է իսկոյն եւ եթ նրա աչքերը դրսից սրբել մաքուր, թաց շորով. մի ուրիշ շորով երեսը սրբել, իսկ յետոյ բաց անելով կողերը, աչքերի մէջ կաթացնել մի մի կաթիլ լապի սի 2<sup>0</sup>/0-ային լուծված քից: Այս վերջին գործողութիւնը միմիայն բժիշկը կամ ուսեալ մանկաբարձուհին կարող են կատարել, ուստի գերադասելի է, որ այդպիսի հիւանդ կնոջ երկունքի ժամանակ ներկայ գրտնէր բժիշկ կամ ուսեալ մանկաբարձուհի: Ես հաւատացած եմ, որ եթէ հիւանդ կինն իմանայ, թէ ինչ տեսակ վտանգ է սպառնում իր երեխային, հաւանական է, որ նա ամեն ջանք գործ կը դնէ նորածին երեխային ազատելու







դացել եւ կուրացել են այդ վնասակար սովորութեան շնորհիւ: Ջարմանալին այն է, որ աչքերը մէզով լուանալու սովորութիւնը մտել է ժողովրդի մէջ պաշտօնական բժշկականութիւնից: Արարները մէջ եւ միջնադարեան Եւրօպայում մէջը պատուաւոր տեղ էր բռնում դեղատան մէջ: Եւրօպայում, Հանրի IV-ի պալատական բժիշկը, ամեն օր առաւօտները մէզով աչքերը լուանում էր, «որ սուր տեսողութիւն ունենալ»: Այժմ, ի հարկէ, բժշկականութեան մէջ մէզը, իբրեւ դեղ, չէ գործադրվում, սակայն ժողովրդի ստոր խաւերում նա շարունակում է դեր կատարել և յաճախ դժբախտութիւնների պատճառ դառնալ:

Միւս վտանգաւոր աչքացաւը տրախոման է (Վանի բառբառով խշրուկ), որը նոյնպէս վարակիչ հիւանդութիւն է: Ռուսաստանում միջին թւով տրախոմայից կուրացածները կազմում են կոյրերի ընդհանուր թւի 35%-ը: Կանայք աւելի շատ են վարակվում այդ աչքացաւով, քան թէ տղամարդիկ (100 տղամարդին ընկնում է 122 կին): Տրախոմայով հիւանդանում են գլխաւորապէս 25 տարեկանից մինչեւ 60 տարեկանը, սակայն ոչ մի հասակ չէ կարող ազատ մնալ նրանից:

Այս դէպքում նոյնպէս աչքի ներսի լորձաթաղանթն է հիւանդանում: Եթէ շուտ անձր վերելի կոպը, կը տեսնենք լորձաթաղանթի վրա մանր բշտիկներ, որոնք սկզբում նմանութիւն ունեն թարմ ձկնիկի ճեւ, իսկ ինքը թաղանթը կարմրած է եւ հաստացած:

Տրախոման մի նենգաւոր աչքացաւ է. մարդ կարող է երկար ժամանակից ի վեր ունենալ նրան եւ իսկի չը զգալ մինչեւ այն ժամանակ, երբ հիւանդութիւնը կը սկսի վտանգաւոր կերպարանք ստանալ: Այս դէպքում տրախոմայի բշտիկները սկսում են քերել եղջրաթաղանթը (աչքը թակել) եւ հիւանդը զանգատվում է, թէ կոպերի տակ մի ինչ-որ բան (աւազ) է շարժվում: Այդպէս շարունակվում է երբեմն շատ երկար ժամանակ: Աերջապէս հիւանդը սկսում է նկատել, որ իր տեսողութիւնը հետզհետէ վատանում է: Նայեցէք այդ ժամանակ նրա աչքերը եւ դուք կը տեսնէք, որ եղջրաթաղանթը պղտոր է եւ երբեմն վերելից պատած արեան անօթներով (առողջ եղջրաթաղանթը զուրկ է արեան անօթներից): Կանցնի մի երկու տարի, եւ այդպիսի հիւանդի կոպերի վերսկսն կուէ գալ, իսկ թերթերունքները շուտ կը դառնան:

1005  
1041  
1041

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
7/31 1922  
ՄԱՅԱՍԻ ԲՅԱՆՆԻ ԱՄԿԱՆ



գէպի ներս (աչքում մագ կը բուսնի—ինչ պէս հասարակ ժողովուրդն է ասում): Սրանով գործն արդէն վատթարանում է, գէպի ներս ուղղված թերթերունքներն իրանց գերը—աչքի պաշտպան—կատարելու փոխարէն, ամեն մի աչքաճպելիս քերում են եղջրաթաղանթը, որի վրա սկսում են երեւալ «խոցիկներ»: տեսողութիւնը խիստ նուազում է եւ կարող է բոլորովին կորչել:

Իրիմամբ մի քիչ երկար նկարագրեցի այս աչքացաւը, որ դուք պատահած ժամանակ, առանց բժշկի օգնութեան, կարողանաք ճանաչել, թէ ձեր դիմացի մարդը, ձեր ծանօթը, ձեզ հետ միասին ապրողը ինչ տեսակ հիւանդութիւն ունի եւ այդպիսով օր առաջ զգուշանաք վարակվելուց:

Գլխաւորապէս վարակվում են խմբովին ապրող մարդիկ, օրինակ, գեղերթիկ աշակերտները, գործարանական բանուորները, դիւնուորները եւ այլն: Փոշին, խոնաւութիւնը, բնակարանի նեղուածքութիւնը, կեղտոտութիւնը, առհասարակ չքաւորութիւնը, նպատում են տրախոմայի տարածման: Մարդիկ վարակվում են մէկը միւսից, երբ մարդ գործածում է այդ աչքացաւով հիւանդի երես-

սրբիչը, ամանը, քնում է նրա անկողնում եւ այլն: Գլխաւորապէս վարակում են խմբովին ապրողները, որոնք մարակվել են տրախոմայով Բագում կամ Անդրկասպեան երկրում եւ տուն վերադառնալով, վարակել են իրանց ընտանիքից շատերին:

Լեռնային երկիրներն ազատ են տրախոմայից, ինչպէս, օրինակ Ղարաբաղը եւ այլն: Սակայն անձամբ տեսել եմ զարաբաղցիներ, որոնք վարակվել են տրախոմայով Բագում կամ Անդրկասպեան երկրում եւ տուն վերադառնալով, վարակել են իրանց ընտանիքից շատերին:

Այժմ հասկանալի է, թէ ինչպէս պէտք է զգուշանալ այդ հիւանդութիւնից: Մաքրութիւնը եւ վարակման էութեան հասկացողութիւն՝ ահա մեջոցներ, որոնք կարող են մարդուս նպաստել պահպանելու իր եւ յաճախ նոյնպէս իր մերձաւորների աչքերն այդ վարակութեան աչքացաւից:

Ով որ մի անգամ հիւանդացաւ, նա պէտք է ունենայ առաձին իր սեփական երես լուանալու ամանը, իր առանձին երեսսրբիչները: նա պէտք է կարելոյն չափ հեռու ապրէ առողջներից եւ աշխատէ, որքան կարելի է շուտ բժշկել իր աչքերը, որովհետեւ տրախոմայի սկզբներում հեշտութեամբ է բժշկվում, իսկ հանաւորաց յետոյ ամիսներ, տարիներ է քաշում:



և Նորածին Երեխաների աչքերի թարախային  
 բորբոքումն, ծաղիկ եւ տրախոմա — ահա երեք  
 պատճառներ, որոնցից գլխաւորապէս կուրա-  
 նում են մեզ մօտ եւ որոնց դէմ անհատը, հա-  
 սարակով թիւնը եւ պետութիւնը պէտք է  
 մաքառեն:



« Ազգային գրադարան »



NL0285773



ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ՝

Անպոչ Հորթը, պատմաժր Սանտերի Բնգմանի, Թարգ. Յով. Ստեփանեանի . . . . .	24
Լուր-Դա-Լուր, քրդական պօէմա Վ. Փափաղեանի	34
Էսքիզներ, Մ. Մանուէլեանի . . . . .	54
Արաղայի դաշտում, պատմաժր Վ. Փափաղեանի .	44
Թռչող խողը, զրոյց Վ. Փափաղեանի . . . . .	34
Երեխաները, Ա. Ահարոնեանի . . . . .	24
Կուրուժեան պատճառները, Բժ. Գ. Օհանեանի .	34



Գումարով գնողներին անում է զեղչ:

‘Կիսկ’ Баку, Русскій Торгово-промыш. Банкъ  
 Јосифу Ярвеляхъ.